

ՆԱԽԹԱՅԻՋԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

IX. ԴՐԱՄԱՏԵՐԵՐԻ ՀԱՍՅՐԱԾ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ: ԵՐԻՈՊԱՅՈՒՄ ԲԱՆ-
ԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՎԱՂՈՒՅ ԵՆ ՍԿՍԻԵԼ:

XVIII-րդ դարի երկրորդ կէսից արդէն Անգլիայի համար օրւայ
չարիքներից մէկը կազմում էր բանւորական խնդիրը, իսկ ներկայ
դարի սկզբներում նոյն այդ խնդիրը—Ջարտիզմ²⁾ անւան տակ—
սարսափելի փոթորիկներ բարձրացրեց անգլիական ներքին կեան-
քում: Անգլիայից յետոյ սկսեց Ֆրանսիայում (XVIII դարի վեր-
ջերում), իսկ ամենից ուշ Գերմանիայում (այս դարի կէսերին)³⁾:

Այդ բոլոր շարժումներից առաջ եղել է բանւորական կեանք,
բայց նա այնքան տանելի է եղել, որ բողոքներ չի առաջացրել:
Մինչև աշանակը ոսկրին չի հասնում, ամբոյսը բողոք չի բարձրա-
ցնում: Ջարմանալի համբերող էութիւն է այդ ամբոխ կոչւած
արարածը: Երբ բողոքներն սկսեցին բանւորների մէջ, այն ժամա-
նակ միայն տեսաւ բորժուան, որ այլ ևս դիմադրել անկարելի է և
սկսեց օր աւուր աւելի ու աւելի զիջումներ անել: Բազմաթիւ աղ-
քատանոցներ, հիւանդանոցներ, ժողովրդական դպրոցներ և այլն—
արդիւնք են այդ մինչև մեր օրերը կրկնուող բողոքների: Որքան

¹⁾ Տես «Մուրճ» 92 թ. №№ 10, 11, 12 և 93 թ. № 3, 4 10 և 11.

²⁾ Морицъ-Мейеръ.—Главн. течен. въ политической экономіи.

աւելի զիջումներ է անում բորժուան բանւոր դասակարգի պահանջներին, այնքան աւելի հեռանում է հարցի վերջնական լուծումը¹⁾։

1) Ինչ է նշանակում թէ հեռանում է հարցի վերջնական լուծումը։ Մենք կանգ ենք առնում այդ հարցմունքի վրայ այն պատճառով, որ բանւորական խնդիրը իրանց սրտին մօտ աւնողներից շատ շատերը երեւակայում են թէ այսպիսի մի խնդիր նման է թւարան սկան խնդիրներին, որոնց լուծելը կարելի է կաբինէտում, և իբր թէ բաւական է որ գտնւեց մի ֆորմուլա—և ահա մնում է որ ամբողջ, նոյն իսկ կուրօրէն հետեւելով այդ ֆորմուլային՝ ունենալով սորան կամ նորան իբր առաջնորդ՝ խորտակի ֆորմուլային դէմ կացող ամեն ոչ թէ և դորանով խնդիրը լուծի։ Այդպէս մտածողներին ամեն ինչ որ կատարւում է բանւորների օգտին, բաց որը վերջնականապէս չի վճռում խնդիրը, սորան չի վերացնում ասպարիզից,—այդ բոլորը նրանց թւում է միայն իբր միջոցներ՝ խնդիրն իրենց յետաձգելու, իսկ աւելի ֆանատիկոսների համար՝ դժբառ ոչ այլ ինչ են եթէ ոչ աչքակապութիւն, խաբէութիւն և այլն։

Մենք պարտք ենք համարում այդ հայեացքին դիմադրել մեր հայեացքը։ Ամեն ինչ, որ կատարւում է բանւորների օգտին, ոչ թէ յետաձգում է խնդրի լուծումը, այլ օգնում է խնդրի լուծման։ Բանւորների օգտին եղածը կարող է բղխել բորժուայից—իբր ստիպւած զիջումներ, նա կարող է բղխել հէնց բանւորներից իրանցից՝ այլ և այլ ընկերութիւնների և դաշնակցութիւնների ձեով, կարող է բղխել կառավարութիւնից՝ բանւորներին հովանաւորող այլ և այլ տեսակ օրէնքների ձեով,—այդ բոլորը ոչ թէ յետաձգում են խնդրի լուծումն, այլ սանում է դէպի լուծումը։ Այդ բոլոր դործառնութիւնների ղեկավար ոգին՝ յառաջադիմութեան ոգին է, մի ոգի, որ կենդանի է այժմեան լուսաւորւած երկիրներում։ Նա է ներշնչողը այն բոլորի, որոնք փոփոխութիւնների են ենթարկում այն ամեն կարգ ու կանոնները, որոնք մի ազգի կամ պետութեան մէջ գործող ֆակտորների հաւասարակշռութեանը խանգարում են։ Այդ կարգ ու կանոնները կարող են և բարոյականին վերաբերել և տնտեսականին և այլն։ Լուծումը հեշտացնում է նրանով, որ աստիճանաբար բա-

Իւրաքանչիւր բարեգործութիւն դրամատիրոջ կողմից աւելի և աւելի բարձրացնում է բանւորի աչքին այդ դասակարգի բարոյական նշանակութիւնը: Որտեղ նոր է բանւորական-գործարանական կեանքը, այնտեղ բուրժուան դեռ չի մտածում ձեռք մեկնել բանւորին, բարեգործութիւն անել, որովհետև դեռ չի հասկանում, որ այդ արածը ողորմութիւն չէ, կամաւոր բարեգործութիւն չէ, այլ միայն ստիպողական պարտք է, որ վճարում է, դրանից հազար անգամ աւելի դեռ պարտք մնալով: առանց այդ բարեգործութիւններին—վաղուց օդը ցնդած կը լինէր բուրժուական կեանքը: Եւ այդ բռնի գործողութեան անունը լուսաւոր Եւրոպան դրել է բարեգործութիւն: Ինչու այդ բարեգործութիւնը չկայ մեզանում, ինչու միլիոնների հետ

ւարարութիւն է ստացւում այսպէս ասած ամեն բեղաւոյ չարիքների համար: Ամենաբեղաւոյ չարիքը կարող են բանւոր դասակարգի համար մի որոշ ժամանակում լինել դիցուք երեխաների և կանանց աշխատելու հանգամանքները: Եթէ չարիքի դէմն առնւում է—դորանով ոչ թէ խնդիր է յետաձգւում, այլ խնդրի մի մասնիկը լուծւում է: Եթէ ամենաբեղաւոյ չարիքը նկատւում է օրւայ աշխատութեան չափազանց երկարութիւնը, որը նոյնպէս կանոնաւորւում է թէկուզ մի առժամանակ բաւարարութիւն ստալու չափով,—դորանով դրական գործ է կատարւում և ոչ թէ աչքակապութիւն: Եւ այսպէս մենք կարող ենք անվերջ թւել բոլոր ինչ վերաբերում է բանւոր դասակարգին: Ինչպիսի առէք որ այդպիսով փոփոխւած հանգամանքներում մեծացած բանւորական նոր սերունդը զանազանւում է աւելի վատ հանգամանքներում մեծացած բանւոր սերնդից, հետեապէս և նորերի կրթութիւնը աւելի բարձր է, պահանջներն էլ ուրիշ են, հասարակական դիրքն էլ աւելի հաստատ է, հետեապէս աւելի ուժեղ է նորա քաղաքական ազդեցութիւնը: Իսկ այս բոլորը անհրաժեշտ ֆակտորներ են խնդրի լուծման համար: Մենք ուրեմն բողոքում ենք շատ հեղինակների և սոցիալական քաղաքագէտների դէմ, որոնք բանւոր դասակարգի օգտին կատարեղ ամեն բարեփոխութիւն պալլախառիւ են համարում և արհամարանքի են մատնում:

ԾԱՆ. ԽԴԲ.

խաղացող նաւթաշրջանը դեռ ևս միայն մի Նորէլ և մի Բենկենդորֆ ունի «բարիք» անողներ, այն էլ շէգներ կամ գերմանացիներ, որոնք իրանց հաշրենիքում համոռն են արել, տեսել են բանւորի, այդ թմբած հսկայի զարթելու ցնցումները, որի իւրաքանչիւր ցնցումը սնանկացնում է եւրոպական դրամատէրերին, որի իւրաքանչիւր դործադուլը զրկում է զանազան ակցիոներական ընկերութիւններին և բորժուաներին՝ հարիւր հազարներ և միլիոններ։ Յիշեցէք միայն Հայդ-Պարկի 1890 թ. հրեշաւոր ցոյցը, յիշեցէք անգլիական երկաթուղիներին և նաւամատուցների բանւորների վերջին գործադուլը, Պարիզի կառապանների, բելգիական հանքագործների գործադուլը և դուք կը տեսնէք, որ այժմ բանւոր դասակարգի ոյժը շատ մեծ է, և չի կարող մի որոշ հետեւանքի հասցնել...

Նաւթաշրջանի հաշ, ոռւս և թուրք դրամատէրերը գաղափար անգամ չունին այդ բաների մասին. նրանք առ այժմ զբաղւած են «օգտակար», փող դիզելով, չմտածելով, թէ մօտիկ ապագայում ինչքէր են կարող պատահել։ Եթէ աշխատէք նրան այդ բանը հասկացնել, նա ձեզ գիծ կը համարէ, որովհետեւ նրա կարծիքով բանւորը հոգի, կամք, խելք, ոյժ չունի, բանւորը մարդ չէ... Այդ է պատճառը, որ ոչ մի միսթարական հիմնարկութիւն չկայ, բացի անբարոյականացնող գինետներից և անառականոցներից. այդ է պատճառը, որ միակ գեղեցիկ հիմնարկութիւնը—Բալխանու հիւանդանոցը—գլուխ եկաւ այնքան անտանկի նեղութիւններով. վերջապէս այդ է պատճառը, որ մօտ 80—90 հարուստ ֆիրմաների միջից դուրս եկան Նորէլն ու Բենկենդորֆը, որ բաց արին իրանց բանւորների որդոց համար երկու փոքրիկ դպրոցներ, որով հազիւ բաւականութիւն կը տան 100—120 երեխաների... Իսկ միւս երեխաները. էհ, թող գնան, կոտորւեն, իրանց հօր նման բանւոր դառնան. միթէ ամենքի հոգան էլ աղաներն են քաշելու։ Ողորմելի լոգիկա...

Հետաքրքրական են այդ միակ հիւանդանոցի հիմնարկութիւնը և կարգերը։ Հիմնարկութեան պատիւը պատկանում բժ. Չախարբէգեանին։ 1887 թ. պարոնը միտք է յղանում սկսել մի այգալիսի գործ։ Մի ամբողջ տարի քաշ է գալիս այս ու այն դրամատիրոջ դուռը, մինչև կարողանում է դրանց համոզել, որ անհրաժեշտ է մի հիւանդանոց ունենալ, որ այդ աւելի աժան կը նստի, քան ս.մեն մի

դժբաղդ դէպքում քաղաքի Միքայէլեան հիւանդանոց դիմելը: Սրանից էլ հեշտ հասկանալու բան դրամատիրոջ համար, երբ նոյն իսկ նրա ամենաթոյլ լարերին—փողի, օգտի հարցին ես խփում: Բայց հարցրէք պ. բժշկին, թէ ինչեր քաշեց մինչև գործը գլուխ բերելը: Տգէտ մարդկանց յատուկ է վախենալ, կասկածանքով նայել ամեն մի նոր ձեռնարկութեան, ամեն մի նոր մոքի վրայ: Այժմ հիւանդանոցի պահպանելուն մասնակցում են 40 ֆիրմաներ: Դրանք իրանց ամսավարձ բանւորներից ամեն մէկի համար ամսական տալիս են 50 կոպէկ և տարեկան գումարը ստացւում է մօտ 22,000 մանէթ, որ և կազմում է հիւանդանոցի գլխաւոր եկամուտը: Մասնակցող ֆիրմաների բոլոր հիւանդներն ստանում են թէ դեղ, թէ բժշկութիւն, թէ քնելու տեղ, ճաշ, հաց, թէյ, ընթրիք և այլն—ամեն բան ձրի: Եթէ հիւանդութիւնը պատահում է յանկարծ կամ հիւանդանոց չեն ուզում տանել, հեռախօսով (տելեֆոն) իմաց են տալիս և իսկոյն բժիշկն օգնութեան է հասնում հիւանդանոցի սեփական կառքով: Հիւանդանոցն ունի իր սեփական դեղատոմար, անդամահատական գործիքներն էլ էքսորական բաժնով, ունի հեռախօս, սեփական կառք երկու ձիերով, Մահճակալների թիւը 23 է, որոնցից 10-ը ներքին (տերապեւտիքական), իսկ 13-ը արտաքին հիւանդութիւնների համար: Այժմ կան երկու բժիշկներ, որոնցից մէկը մասնագէտ է ներքին, վնասական և նեարդային հիւանդութիւնների, իսկ միւսը վիրաբույժ է: Նրանցից մէկն ստանում է ամսական 300 մանէթ, միւսը 200: Գործի ծաւալը, պ. բժշկի ասելով, այժմ արդէն պահանջում է երրորդ բժշկի անհրաժեշտ ներկայութիւնը: Եթէ միջոցները ներեն, մտադրութիւն կայ այժմեան նեղ շէնքը փոխել և մօտը շինել նորը, որի համար բաւական ընդարձակ ու յարմար տեղ կայ. կեղտից ու ծխից հեռու է: Հիւանդութիւններից ամենից շատ պատահում է արիւնխտառն լուծում (крово́вый понос), զոդ (лихора́дка), վնասական ախտեր, կաշւի հիւանդութիւններ և այլն, ի հարկէ չհաշւած ֆնասումները: Սրանցից ամենալուսնդաւորն արիւնխտառն լուծումն է, որ արդիւնք է վատ ուտելիքի, ջրի և ոյժից վեր տանջող աշխատանքի: Քչերն են առողջանում այդ հիւանդութիւնից. բռնածին մահացնում է:

Շատ հեշտ և յարմար է նոյն ձևի մի հիւանդանոց հիմնել

Սև-Քաղաքում, բայց դեռ ևս չի լոյս ընկել մի յարմար, եռանդուն մարդ, որ կարողանար սկսել: Որպիսի դժարութիւնների էք հանդիպում այստեղ հիւանդութեան վատ դէպքերում: 160 զործարանների բազմաթիւ բանւորների, կառավարիչների և միւս ծառայողների ու նրանց ընտանիքների համար չկա մի հիւանդանոց, չկա մի բժիշկ, որ անհրաժեշտ դէպքերում օգնութեան հասնի: 1891 թւի զարնան երեկոներից մէկում գտնուում էի բարեկամներիցս մէկի մօտ, Սև-Քաղաքում: Եղանակն անտանելի էր. քամի, անձրև, ցեխ իրար խառնւած: Երեկոյեան ժամը 11-ի ժամանակները յանկարծ սենեակն ընկաւ դրասենեակի կառավարչի կինը և հեծկլտալով յայտնեց, որ ամուսինն ուշադնաց վաչր է ընկել: Պէտք էր բժշկական օգնութիւն հասցնել: Շոգեկառքի երթևեկութիւնն արդէն ժամը 9-ից դադարել է, կառքեր չկան, եղածներն էլ քաղաքից են զալիս և իսկոյն էլ դառնում են: Մնել դրութիւն... բնութիւնն էլ կարծես, ուզում է իր բոլոր անճոռնութիւնը թափել, վերջացնել: Փայտերով զինւեցինք, մինչև քաղաք այն անձրևին համարեան վաղ տւինք, բժիշկ բերինք: Հետևանքն այն եղաւ, որ մի հիւանդի օգնութիւն հասցնելու համար, երկու առողջներս հիւանդացանք: Դեռ լաւ էր, որ հիւանդութիւնը թեթեւ էր, իսկ եթէ ծանր բան լինէր...

Սև-Քաղաքի բոլոր հիւանդներին տանում են քաղաքի հիւանդանոցն:

Բացի հիւանդանոցի դրամատերերից երկուսը — Նոբէլ եղբ. և Բենկենդորֆը — հիմնել են երկու դպրոցներ: Սրանցից աւելի մեծը Նոբէլ եղբայրների Սև-Քաղաքում պահած դպրոցն է, որ ունի 3 բաժանմունք, 3 վարժուհիներով և 70 երկսեռ երեխաներով: Դպրոցն ունի նաև բոլոր մարմնամարզական գործիքները: Միւս զըպրոցն ունի 2 բաժանմունք: Ախոս, որ հնար չեղաւ երկու դպրոցների տարեկան բոլոր ծախքն իմանալ, Դա հետաքրքրական է այն պատճառով, որ շատ պարզ կը լինէր, թէ դրամատերերի ընդհանուր եկամտի մը հազար երորդ մասը կը կազմէին այդ չնայն «բարեգործութիւնները»... Դրամատերերի համար այդ 25 — 27 հազարները (հիւանդանոցի և դպրոցների) կոպէկներ են, աչքի չեն երևում:

էլի փառք Աստծու, որ երեխաների համար այդքանն էլ կայ. հասլա ինչ անեն մեծերը, որ ոչ մի տեղ չունին կրթելու համար, բացի գինետներից ու փողոցներից: Ինչ անեն, ձուր դիմեն, բացի գինետան մէջ հարբելուց: Հեշտ է ասելը, Լե-Նիկոլայեի— մոէք մէջները, մի քանի օր միայն ապրեցէք իսկապէս բանւորի կիանքով և դուք կը տեսնէք, որ նրանք խմում են ոչ թէ որ «ОДЫ-МАНИВАТЬ СОВѢСТЬ», այլ միայն մաշող հոգսից ազատւելու, մոռացու-թեան տալու համար: Երբ, իրտեղ տեսաւ լաւը և հնետեկց: Ով նրան բացատրեց, ճանապարհ ցոյց տւեց իր դուրսիցն ազատ-ւելու և նա չլսեց, չկատարեց: Մի կիրակնօրեայ դպրոց, մի շարք բուն ժողովրդական դաստիարակութիւններ, մի ընդհանուր ժողովա-տեղի կարող են ահագին թարմութիւն, շարժում գցել բոլոր բան-ւորների մէջ:

Այդ բոլորի մասին չի կարող մտածել նաւթաշրջանի դրամա-տէրը, որովհետեւ ինքն էլ տգէտ է, համարեա հաւասար բանւո-րին իր հասկացողութիւններով: Նա հանգիստ կերպով սեփականաց-նում է բանւորի աշխատանքի պտուղն առանց խղճահարւելու, առանց հասկանալու, կարծելով, թէ այդ է Աստուծային դուրսիւնը, ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Նա գործ է ածում, օգտւում է մեքենաներից, էլեքտրական լոյսից, կուլտուրայի բոլոր հետեանք-ներից, բայց նրանց կազմութեան մասին, նրանց ինչ գնով ձեռք բերւած լինելու մասին նա հասկացողութիւն անգամ չունի: Դժւար է գտնել մի այնպիսի քաղաք (գոնէ Կովկասում), որն այնքան օգու-ւէր կուլտուրայի արդիւնքներից և այդքան քիչ տոկոս գիտութիւ-նից մի բան հասկացող մարդիկ պարունակէր իր մէջ: Նաւթաշր-ջանը զարմանալի խառնուրդ է եւրոպական առարկաների և ասիա-կան տգէտ գլուխների, եւրոպական ձոխութեան և ասիական տգի-տութեան: Իսկ այդ բոլորից անմաս է մնում դրանց գլխաւոր ար-տադրողը—բանւորը. նա համբերութեամբ տանում է իր ծանր խաւը, նա մաշւում, տանջւում է, որ իր մկանների ու ջղերի հիւ-թով կերակրէ, պծէ, զարդարէ, զւարճացնէ բուրժուային, աղային:

X. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Ամեն դար ունեցել է իր ճնշւած, կարիքների մէջ լողացող դասակարգը: Հին դարերում այդ դասակարգը կազմել են ստրուկները, միջին դարերում ճորտերը, աղային, մելիքին, բէկին, խանին, պոմեշիկին, բարոնին կամ վանքերին պատկանող հողազուրկ գիւղացին, իսկ մեր — XIX դարի բնորոշ գիծը կազմում է խօսքով ազատ, իրապէս ստրուկ, ճորտ վարձկանութիւնը: Նկատելու է, որ բոլոր դարերի ճնշւած դասակարգերի ընդհանուր գիծն է եղել — աշխատել և իւր աշխատանքի պտղից զրկւել, ստանալով մարմնական գոցութիւնը պահպանելու ամենամանհրաժեշտ միջոցները միայն. մնացած արդիւնքը միշտ հաւաքւել է այն մարդկանց մօտ, որոնցից միջապէս կամ անմիջապէս կախում են ունեցել այդ դասակարգերը: Ստրուկ, ճորտ, բանւոր, պրոլետարիատ, վարձկան բառերը ոչնչով չեն մեղմացրել կամ փոխել այդ գաղափարի տնտեսական արժէքը. դրանք եղել են մի շարք առաջադիմական փոփոխութիւններ միայն իրաւաբանական ճանապարհի վրայ: Այդ փոփոխութիւնները կարող են լինել միայն միջւց տնտեսական հաւասարութեանը հասնելու. նրանք չեն կարող բանուր դասակարգի վերջնական նպատակը լինել: Այդ բոլոր անունների ռակ թաղնւած է եղել մի գաղափար. մարդկանց մի ամբողջ դասակարգ, որոնք զրկւած են եղել արդիւնազործութեան բոլոր միջոցներից, որոնց հարստութիւնը, դրամադուլիսը կազմել են միայն իրանց զոյգ ձեռքերը և ուրիշ ոչինչ:

Միթէ նոյնը չէ և նաւթաշրջանի բանւորի համար. նա ապրում է, վարձ է ստանում, շորեր է գնում, բնակարան վարձում և այլն — ծախսելով միայն իր մկանների ոյժը, զրկւելով իր առողջութեան մի մասից: Քանի կայ այդ մկաններում ոյժ և քանի դեռ այդ շարժարեւելու դատապարտւած մարմինը ուժասպառ չի եղել, նա վստահ է, որ մի որ և է զործ կը գտնի, իսկ երբ այդ միջոցից էլ զրկւեց — մնաւ բարով կեանք... Հին դարի ստրուկը, միջին դարի ճորտը դոնէ քաղցած չէր մեռնիլ, իսկ այժմեան պրոլետարիատը քաղցածութիւնից մեռնում է, իրան է սպանում, որդոցն է թունաւորում: Ի՞նչ գնով գնւեց իրաւաբանական լոկ ազատը խօսքը...

Սակայն որքան էլ դառն լինի այդ ազատ խօսքի հասցրած փաստերը, էլի ուս չի կարող հասնել այն մեծ օգտին, որին կարողացան հասնել եւրոպական բանւորներն այդ ազատ ճանապարհի շնորհով։ Խօսքի և ժողովների ազատութիւնը բանւորին միջոց տւեց միանալու, մի հաւաքական մարմին կազմելու։ Եւ այդ հաւաքական մարմիններն են, որ այժմ դողացնում են անգլիական սոցիալաւոստ միլիօնատէր գործարանատէրերին և ընկերութիւններին։ Բանւորական ընկերութիւններն այժմ կազմում են մի տեսակ «Թագաւորութիւն թագաւորութեան մէջ»։ Այդ թագաւորութիւնը ունի իր իշխանութիւնը և սովորութիւնները, որոնք փոխարինում են հաստատուն օրէնքներին։ Նա շատ պինդ է պահպանում իր առաջադէմ կարգերն ու սովորութիւնները։ Այդ «Ընկերութիւնները» 1871 թւին անգլիական օրէնքի կողմից ճանաչւեցան իւրեւ իրաւաբանական մարմիններ, այսինքն ստացան անհատի վայելած ընդարձակ իրաւունքները։ Այժմ այդ ընկերութիւնները վստահ կերպով պահանջներ են դնում իրանց բազմաթիւ օրգանների ու տաղանդաւոր առաջնորդների միջոցով։ Բանւորական միութիւններն ունին մեծ ոյժ, այդ ուժից ստիպւած տեղի են տալիս դրամատէրերը նրանց պահանջներին։ Շատ հեռու է այն ժամանակը, երբ բանւորական համաշխարհային ժողովների և ընկերութիւնների միջոցով այդ դասակարգն իր ձեռքը կառնէ քաղաքական շատ հարցեր և ամբողջ տնտեսական կեանքը։ 1890 թւի Լիւերպուլի շտեմնած բազմամարդ ժողովը հաստատեց նոյն թւի Հայդ-Պարկի ժողովի որոշման երկու կէտերը. ա. օրական 8 ժամ աշխատանք և բ. որ գլխաւորն է, խիստ կերպով ջանալ արդիւնագործութեան և հարստութիւնների բոլոր միջոցները դարձնել ընդհանուրի հաւաքական սեփականութիւն, որը կը կազմէ միակ ճշմարիտ միջոցը ժողովրդին ներկայ արդիւնաբերական ստրկութիւնից ազատելու։ Այդ նպատակներին հասնելու համար ընկերութիւններն ունին ահազին դրամական միջոցներ և միլիօնաւոր անդամներ։ Բաւական է ասել, որ նրանց զանձարանի փողը կարող է 4 ամսուայ գործադուլի ժամանակ ազատ պահել նրանց նիւթական նեղութիւններից։

Այժմ նայինք նաւթաշրջանի բանւորների վրայ։ Ի՞նչ կը տես-

ներք. մարդանման, շարժուն էակներ, որ ոչ մտածել զիտեն, ոչ խօսել: Ընկերական հոգու կատարեալ բացակայութիւն, լիակատար մտաւոր ազիտութիւն ու բարոյական և փիզիքական քայքայում: Գրադիտութեան կատարեալ բացակայութիւն, անասնութեան հասած հնազանդութիւն և անտանելի կեղծաւորութիւն: Իսկ ձեռք մեկնող դեռ ևս ոչ ոք... Վերջին ժամանակներս լսուած են լրագիրներում լուրեր, որ ներքին գործերի նախարարութեան մէջ մշակուած են կանոններ բանւորների կեանքի ապահովութեան, բնդհանուր գանձարանի, և բնակարանների վերաբերութեամբ:

Վերջին վիճակագրական տեղեկութիւնները պարզեցին, որ 1892 թի յունւարի 1-ին նաւթադաշտի մշտական բանւորների թիւն է 5610 հոգի, իսկ Սե-քաղաքին 4119 հոգի, ուրեմն գումարն է 9729 հոգի: Այդ դեռ մշտական կամ ամսավարձ բանւորները, իսկ օրավարձները, բաղմաթիւ արհեստաւորները, քաղաքի զրասենեակներում նոյն նաւթային գործին ծառայողները... եթէ այս բոլորն աչքի առաջ ունենանք, կարող ենք ասել որ նաւթաշրջանի բանւորների թիւը ամենապակասը 15—18,000-ի կը հասնի: